Զի Վանատիք այնպէս պերճ եւ մալով է, որ մէկ օրն մալի ուժով կարող է ԾԹ հոգի գնել եւ Շ խատրղայ ծովն հանել. ամէն պատրղա ԲՃ ճանկչի գնել արաղեասախովն. եւ ինքն յումեքէ ոչ երկնչի, զի չուրջ զքաղաքաւ ծով է. միայն Ալամանու աշխարհէն սակաւ մի ահ ունի, զի մօտ է, լեռներն կ՚երեւնայ: Եւ ասին թէ Սա Մարքոյին ժամուն խաղնին եւ ձէնովու քաղքցոց նման փարթամ եւ հարուստ չկայ այլ տեղ: Քանզի հզօր թագաւորն Սպանիու բազում անգամ փոխ առնու ձէնովուն գանձ:

7. Ի ՏԷՐՈՒԹԵԱՆ ՓԱՓԻՆ

Եւ իբրեւ մերձեցան աւուրք գնալոյ ի Հռոմ, ո՜հ եւ վայ ինձ, զի ազդմամբ չարին եւ նախանձու նենկաժոտ սուտ եղբարց կամ թէ բանսարկու վատ մարդկանց՝ խռովութիւն եւ չփոթ անկաւ մէջ մեր. եւ կռուեալ հետ Զաքարիայ վարդապետի՝ որոշեցաք ի միմիանց: Նա գնաց ի Հռոմ եւ ես մնացի Վէնէտիկ այլ եւս տասն օր: Եւ գտեալ նաւակ մի պատրաստական՝ մտի ի նա եւ վեց օրն հասայ ի յԱՆՔՈՒՆԻԱՅ գեղեցիկ քաղաք. որ եւ սա սկէլէ եւ նաւահանգիստ էր: Եւ այս քաղաքս չէն մեծ եւ բարելի էր եւ մրգաշատ, ի վերայ բարձրաւանդակ տեղոջ: Մինչեւ

105 Վանատիճ:
2 ատամամբ: